

ISSN 1829-1651

Ð²ê²ð²Î²Î²Ü-ø²Ô²ø²Î²Ü ì°ðÈàôÌ²Î²Ü Þ²´²Â²Â°ðÂ

Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարները կհանդիպե՞ն

«Ինտերֆախի» հաղորդմամբ՝ կարծես իրականություն է Հայաստանի եւ Ադրբեջանի արգործնախարարների հնարավոր հանդիպման մասին լուրը: Համենայնդեպս՝ գործակալությունը հայտնում է, որ ռուսական կողմն առաջարկել է այդ հանդիպումն անցկացնել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ:Ռուսաստանը բանակցում է Հայաստանի եւ Ադրբեջանի հետ՝ երկու երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպումը Մոսկվայում կազմակերպելու համար: Այդ մասին երեկ խոսել է ՌԴ արտաքին գերատեսչության մամլո խոսնակ **Մարիա Զախարովան**:«Մենք շարունակում ենք ճնշարկումները նշված ձեւաչափով հանդիպում կազմակերպելու հարցով», ասել է նա՝ հավելելով, որ Ռուսաստանն ակտիվ ջանքեր է գործադրում Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողություններն անհապաղ դադարեցնելու,առկա հիմնարար սկզբունքների ու միջազգային իրավական փաստաթղթերի հիման վրա բանակցային գործընթացը վերսկսելու համար:

œð”ð˘ –”î

Տեւական ու երաշխավորված խաղաղությունից պակաս ոչինչ ընդունելի չէ

Անշուշտ դժվար է մեզ՝ հայերիս համար սառը դատողությամբ մեկնաբանել, նույնիսկ ներկայացնել մեզ պարտադրված պատերազմական իրավիճակը եւ կանխատեսումներ անել ռազմական գործողությունների դադարեցման հնարավորությունների մասին: Ռազմաճակատից հասնող տեղեկությունները, մեր ռազմիկների անձնուրաց պայքարի, մեր բանակի կործանիչ գործողությունների վերաբերյալ ամփոփագրերը, հակառակորդի ծանր կորուստները՝ սպառազինության ու մարդուժի, չեն կարող թեթեւացնել մեզ, զսպել մեր արցունքները մեր մարդկային կորուստների դիմաց: Ցիր խոսք կա՝ շատից շատ է գնում, էշից՝ իչ: Բայց մեր իչը շատ է, շատ եւ առավել շատ է մեզ համար:

Այսուհանդերձ, սթրեսված դիմելով միջազգային մամուլի անդրադարձներին, որոնք շատ առատ են այս օրերին, հնարավոր է ներկայացնել մի քանի դիտարկումներ՝ սեփական ընկալմամբ եւ ընդհանրացումներով:

Առաջինը, որն ընդգծվում է միջազգային գրեթե բոլոր վերլուծաբանների կողմից՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի, մասնավորապես համանախագահների հեղինակազրկումն է, որը, դժբախտաբար, հակառակ կողմից հաստատում է աղակառուցողական գլխավոր կողմի՝ Ալիեւի պնդումը Մինսկի խմբի անգործության եւ անարդյունավետության մասին: Անշուշտ մեզ համար ավելի քան հասկանալի է Ալիեւի այդ պնդման ներքին շարժառիթը՝ ամեն գնով եռանախագահության կազմը համալրել Թուրքիայով, որին, գիտակցում ենք բոլորս, ներկա պայմաններում հնարավոր չէ հակադրել Իրանի թեկնածությունը: Սակայն այս պարագայում կրկին տեսանելի է դառնում Ալիեւի ու նրա խորհրդականների կարճամտությունը. Թուրքիան ընդհանրապես չի կարող միջնորդ լինել, նա բացահայտ կողմ է, ավելին՝ հրահրիչ, մասնակից, հանցակից:

Երկրորդ դիտարկումը, որն անում են միջազգային գրեթե բոլոր մեկնաբանները, համանախագահների կազմում Մոսկվայի «վերին ձեռք» ունենալն է՝ թե՛ որպես պատերազմող երկու կողմերին զենք մատակարարելու, թե՛ որպես Հայաստանի պատասխանատու դաշնակիցը հանդիսանալու, թե՛ ՀԱՊԿ անդամության եւ թե Հայաստանում ռազմաբազա ունենալու տեսակետից: Առանձնահատուկ դիրք, ըստ են մեկնաբանները, որը չի օգտագործվում որպես ռազմական գործողությունները դադարեցնելու եւ կողմերին բանակցությունների սեղան բերելու գործիք: Եվ ըստ երեւույթին, ավելացնենք մեր կողմից, այդ հանգամանքներին էր պատասխանում նախագահ Պուտինը չորեքշաբթի օրը, երբ պնդում էր, որ թշնամական գործողությունները չեն ընդգրկում Ռուսաստանի դաշնակից Հայաստանի հանրապետության սահմանները: Մեկ կողմից ՀՀ անվտանգության առումով դրական, իսկ մյուս կողմից՝ անհեթեթ պնդում՝ եթե նկատի ունենանք օդային սահմանները՝ հրթիռային եւ դրոնային հարվածները, որոնք արդեն ոչ միայն ՀՀ-ի, այլեւ Իրանի եւ նույնիսկ Վրաստանի սահմաններն են մխրճվում:

Այս պարագայում արժե հիշեցնել նաեւ միջազգային վերլուծաբանների այն դիտարկումը, որ Ռուսաստան-Թուրքիա ներկա արտաքին հարաբերությունները հիշեցնում են Իդլիբում (Սիրիա) եւ Տրիպոլիում (Լիբիա) ռուսների ցուցաբերած՝ այսպես կոչված հանդուրժողականությունը էրդողանի զորքերի եւ վարձկանախմբերի նկատմամբ: Մինչեւ ո՞ւր կարող է երկարել այդ հանդուրժողականությունը. մեզ համար սա է կարեւորը:

Իդլիբ-Տրիպոլի-Արցախ՝ թուրքական ներդաշնակված կարմիր հետագիծ, որն այսօր իր արյունոտ շղթայի մեջ է առել նաեւ հայոց հողը, միաժամանակ սպառնալով հարեւան երկրներին եւ նույնիսկ Ռուսաստանին: Արցախյան հակամարտության մեջ ներ, ավելի ճիշտ՝ նորացված բաղադրիչը Թուրքիան է ու նրա ահաբեկչական գործիքակազմը՝ կանոնավոր բանակ թե ջիհադիստներ: Այժմ սա՛ է եռանախագահության առաջ դրված գլխավոր խնդիրը: Ի՞նչ լուծում կարող են առաջարկել նրանք. սպասե՞լ մինչեւ այն պահը, երբ հայերն ու ադրբեջանցիները փոխադարձ հարվածներով կսպառեն միմյանց եւ հոգնած՝ կընդունեն պարտադրված որեւէ կարգադրություն, ինչպես ընդունեց նախկին հարավսլավիան... Սա չի՛ ստիպի, բայց կոնֆլիկտի մեջ է մտել ՆԱՏՕ-ի 2-րդ բանակն ունեցող երկիրը՝ Թուրքիան: Չի՛ ստիպի, բայց հայերս մեր գոյութենական կռիվն ենք մղում ու մարտնչում ենք կանխելու համար նոր ցեղասպանությունը:

Նախորդիվ գրել եմ եւ այժմ, պատերազմի 12-րդ օրը, կրկնում եմ. ճակատային գծի որեւէ կետում թույլ չտալով թուրք-ադրբեջանական որեւէ ձեղթում՝ մենք արդեն իսկ հաղթել ենք, թեեւ մարդկային մեծամեծ կորուստներով, թեեւ հարատեւ ռմբակոծությունների տակ ավերակվող Արցախով: Այո, թշնամին, պարտվելով դեմ առ դեմ կռվում, այժմ ուզում է «այրած հողի» վերածել Արցախը՝ «չկա ժողովուրդ՝ չկա խնդիր» թուրքական ծանոթ սկզբունքով, բայց գիտենալով, որ պատերազմական ռազիրների եւ նախահարձակ լինելու համար ոչ ոք չի պատժի իրեն: Կարո՞ղ ենք նաեւ դիվանագիտական մարտադաշտում ջարդել նրա այդ ինքնավստահությունը եւ ցույց տալ բոլորին, ներառյալ համանախագահները, որ «ոչ ոքի» արդյունքը բացարձակապես ընդունելի չէ մեզ համար: Նախահարձակները, ոճրագործները պետք է պատժվեն:

Մենք տեւական խաղաղություն ենք ուզում, մեր իսկ զենքով երաշխավորված խաղաղություն՝ Հայաստան եւ Արցախ ամբողջական խաղաղություն. դրանից պակաս ոչինչ ընդունելի չէ մեզ համար:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

Աշխարհի ճակատագիրը մեր ձեռքո՞ւմ է

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Աշխարհի ճակատագիրը , փաստորեն, հայերի ձեռքերում է, պաթոսով չհնչի հանկարծ, քանի որ մեր տարածաշրջանում եւ Եվրոպայում քաղաքակրթական քաոս ստեղծող երկիրը՝ Թուրքիան, Ադրբեջանի եւ, ինչու չէ, իր ուղարկած միջազգային ահաբեկիչների ձեռքով, քաոսի ձեռագիրը բերել է մեր սահմաններ, բայց գլուխը խփել հայ զինվորի դիմադրության հզոր պատին. Տեսեք, թե որքան ոչ անհրկիմաստ է Ռուսաստանի արտաքին հետախուզական ծառայության՝ սովորաբար ոչ շատախոս ղեկավար **Սերգեյ Նարիշկինը** Լեռնային Ղարաբաղի շփման գծում բախումների ներկա պահի մասին խոսելիս.«Իրավիճակի ներկայիս սրումն անհանգստություն է առաջացնում ոչ միայն իր մասշտաբով, այլեւ արտաքին գործոնների հիմնովին նոր ազդեցությամբ: Ադրբեջանի կողմում բացահայտ եւ միանշանակ կերպով հանդես է եկել Թուրքիան: Բացի այդ, Ղարաբաղում սրվող զինված դիմակայությունը մագնիսի պես ձգում է զինյալներին տարբեր միջազգային ահաբեկչական կառույցներից»: Նա նույնիսկ այդ կառույցների անուններն է տվել՝ այդպիսով մասնանշելով այս բախման մեջ պարունակվող թուրքական սնման ահաբեկչության տարածաշրջանային սպառնալիքը:

Ահա թե ինչու է գործնական աջակցությունն ուշացնող ասխարհի բախտը հայ զինվորի ձեռքին. որը հիմա կասեցնում է նաեւ ահաբեկիչներին եւ նրանց միջազգային մտադրությունները գոնե մեր մասով:

Հասկանո՞ւմ ես, ասխարհ, թե՞ դեռ գլուխդ ես մտբմտբացնում անհասկացողի տեսով: Զոհվում են մեր լույս տղաները՝ անհավանական քաջության պատմություններ թողնելով որպես պատմություն, բազմահազար ոչխարին հայրենիք պահողի տասնապատիկ ուժով դիմակայելով: Ասխարհ, ն երեսպաշտության, երկդիմիության եւ անտարբերության պատճառով տաղանդավոր ու ապագայի ներուժ մեր տերն են գնում...

Երեկ պատերազմի տասներկուերորդ օրն էր: Թշնամու նախահարձակ գործողությունների ընթացքում հայկական կողմն ունի զգալի թվով զոհեր ու վիրավորներ, ամեն օր հրապարակվող զոհվածների ցուցակներում մեր լույս տղաների անուններն ու ծննդյան թվերը կարդալն անգամ դարձել է ծանրագույն մի բան, գույժերը մթնեցնում են արդեն հարյուրավոր ընտանիքների լույս օրը:

Պատերազմ է, ու ինչպես որ արդեն հարյուրավոր անգամներ ասխարհին բացառել ենք՝ քաղաքրթությունները եկել ու բախվում են մեր հայրենիք Արցախի սահմանին՝ խլելով մեր զավակների ու եղբայրների կյանքը, ու հակաքաղաքակրթական ոչխարին կասեցնելու այդ քանկ գինը վճարում մենք՝ հայերս: Հերթական անգամ:

Երեկվա տվյալներով՝ հակառակորդն ուներ ավելի քան 4069 զոհ, հայկական կողմից, նախնական տվյալներով, զոհվել է 331 զինվոր (երեկյան կողմ այդ թիվը, ցավոք, ավելացել էր:- **Մ.Խ.**):

Ըստ Արցախի տեղեկատվական շտաբի՝ սեպտեմբերի 27-ից մինչ երեկ Արցախի զինուժը խոցել էր հակառակորդի՝ 16 ուղղաթիռ, 17 ինքնաթիռ, 145 անօդաչու թռչող սարք, 496 միավոր զրահատեխնիկա, հիմնականում տանկեր, 4 «SOU-1Ա» ծանր հրանետային համակարգ, 4 «Սմերչ»:

Միջազգային հանրությունից ամեն որ տարատեսակ աջակից ազդակներ են գալիս, բարոյական աջակցության պակաս չի եղել մինչեւ այժմ, անգամ եվրոպական խորհրդարանի պատգամավորների մեծ մասը դատապարտեց տեղի ունեցողը, սակայն գործուն օժանդակություն դեռեւս տեսանելի չէ: ՌԴ նախագահ **Վլադիմիր Պուտինը**, որից հայ հանրությունն, այնուամենայնիվ, գործուն աջակցություն է սպասում, իր ծննդյան օրը հատկ արտահայտվեց՝ Հայաստանը չի դիմել Ռուսաստանին, դիմելու դեպքում՝ ՀԱՊԿ անդամ Հայաստանի դեպքում պարտավորությունները լիովին են կատարվելու:

Ըստ լուրերի, Ժնեւում երեկ գաղտնի վայրում տեղի է ունեցել ԵԱՀԿ ՄԽ համանախագահների եւ Ադրբեջանի ներկայացուցիչների միջեւ հանդիպումը: Ուրեմն ճիշտ է, հա՛. Ֆրանսիայի արտգործնախարարը, որը ղարաբաղյան հարցով բանակցությունների մեկնարկի մասին էր խոսում, ճիշտ է նրա արած այն արտահոսքը՝ հանդիպումների օրերի թվերով: Սա նշանակո՞ւմ է, որ սվերային գործընթացներ, այնուամենայնիվ, եղել են ու կան: Ինչ բանակցություններ են դրանք (չնայած ԱԳՆ ներկայացուցիչ Աննա Նաղդալյանի հերքմանը)՝ ՌԴ նախագահի մամլո խոսնակն էլ հոկտեմբերի 12-ին կայանալիք Մոսկվայում-Լավրով հանդիպման մասին էր խոսում, եւ առհասարակ, ի՞նչ է տեղի ունենում, որից տեղյակ չեն ոչ հայ հանրությունը, ոչ անգամ քաղաքական շրջանակներն ու իշխող խորհրդարանական մեծամասնության գերակշիռ մասը: Հիշում եք, չէ՞, նախորդ անգամ, անցած դարի իննսունականների կեսին ինչով վերջացավ սվերային պայմանավորվածության փորձը հակամարտության կարգավորման մասով՝ հանգեցնելով իշխանափոխության: Իսկ հիմա հաստկապես, երբ հայ հանրության ներկայացուցիչները, առանց հաշվի առնելու, թե իրենք քաղաքական որ խմբին են պատկանում, միասնաբար մեկնում են հայրենիքը պաշտպանելու ու զոհվում են, ոչ ոք չի կարող այդ արյունը շրջանցել ու հանրության կամքին հակառակ՝ որեւէ միջազգային ճնշման սուբյեկտ դառնալ:

⇨7

Թույլ մի՛ տվեք, որ պատմությունը կրկնվի

105 տարի շարունակ մենք անցկացնում ենք ոգեկոչումներ, խաղաղ ցույցեր, հուշարձաններ ենք կառուցում, հոդվածներ գրում մեր տեղական թերթերում, խնդրում աշխարհի առաջնորդներին եւ նրանց երկրներին ճանաչել եւ դատապարտել 1915 թվականին Օսմանյան թուրքերի կողմից իրականացված հայ ժողովրդի ցեղասպանությունը: Այս հիշարժան ամսաթվերն ընդգրկում էին հայերի ավելի քան երեք սերունդ: Եվ մարդիկ կհարցնեն... ինչո՞ւ: Ինչո՞ւ պետք է այսքան փորձությունների միջով անցնել՝ հիշելու համար, թե ինչ է տեղի ունեցել ավելի քան 100 տարի առաջ: Մենք՝ հայերս, հաճախ ենք լսում, երբ մարդիկ ասում են մեզ. «Պարզապես մոռացեք անցյալը»: Անցյալն անցյալ է, պարզապես բաց թողեք այն: Կռահեք ինչ... անցյալը դարձել է ներկա: Մեր խաղաղ ցույցերն ու հուշահամալիրները կրկի՞ն աննկատ են մնացել: Իզո՞ւր էին մեր բոլոր նախազգուշացումները: Ինչ-որ մեկին հետաքրքրո՞ւմ էին հայերը 1915 թ-ին: Այդ ժամանակ թերթերում շատ հոդվածներ կային հայերի կոտորածի մասին:Ինչ որ մեկը մասը մասին տվե՞ց օգնելու այդ խեղճ մարդկանց: Արդյունքում, այդ ժամանակ կոտորվեց 1,5 միլիոն հայ, ինչը Ռաֆայել Լեմկինը իր «Առանցքի ուժը բռնազավթված Եվրոպայում» գրքում 1944 թվականին անվանեց «ցեղասպանություն»:

Այսպիսով, 105 տարի անց մենք հայտնվեցինք նույն իրավիճակում: Մենք մեր թերթերում կարդում ենք Արցախի ժողովրդի վրա Ադրբեջանի հարձակումների մասին: Պետք է ինքներդ ձեզ հարցնեք՝ ինչո՞ւ: Կա՞ն նավթի հարուստ պաշարներ կամ գուցե ոսկի՞: Իրականում այնտեղ բացի լեռներից, հնագույն եկեղեցիներից եւ հայ ժողովրդից ովքեր դարեր շարունակ երկրպագել են այդ եկեղեցիներում, ուրիշ ոչինչ չկա:Հիմա նրանց վրա հարձակվում են միայն մեկ նպատակի համար՝ պահանջել հող, որը երբեք իրենց չի պատկանել եւ ոչնչացնել այդ հողերում դարերով բնակված մարդկանց ու նրանց մշակույթը: Ինչպե՞ս եք դա անվանում, երբ մի երկիր վերացնում է մի ժողովուրդ իր նախնյաց հողերից եւ ոչնչացնում է նրա մշակույթը:

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Իր պատմության ընթացքում Արցախը / Ղարաբաղը ղեկավարել են շատ հզոր հարեւաններ, բայց անվիճելի փաստն այն է, որ հայ ժողովուրդը այս աբողջ ընթացքում պորել է այդտեղ:Այո,ինչպես շատ ուրիշ երկրներում, այստեղ նույնպես կան փորձառնություններ, բայց եթե մի փոքր ուսումնասիրություն կատարեք, կարող եք գտնել ճշմարտությունը: 1926-ին՝ Ադրբեջանի եւ Հայաստանի խորհրդային երկրների կազմավորումից անմիջապես հետո, Արցախի բնակչությունը կազմում էր տեղի բնակչության գրեթե 90% -ը: Հետո նրանք ճանաչվեցին որպես կիսանկախ ժողովուրդ, եւ Արցախը սացավ «ինքնավար մարզի» կարգավիճակ: Եկեք ավելի սերտ ուսումնասիրենք այս եզրույթը: Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ինքնավար մարզերը վարչական միավորներ էին, որոնք ստեղծվել էին մի շարք՝ ավելի փոքր ժողովուրդների համար, որոնց ԽՍՀՄ տասնհինգ հանրապետություններում ինքնավարություն էր շնորհվել: Հիմնաբառը «ինքնավարություն» է: Իոսիֆ Սալինը այս փոքրիկ երկրամասին տվեց «ինքնավարություն», սակայն հանձնեց Ադրբեջանին ՝ Թուրքիային հանգստացնելու համար: Նրանց տրվեց նաեւ խորհրդային կառավարության պաշտպանություն: ԽՍՀՄ փլուզմամբ այդ պաշտպանությունը դադարեց: Նախկին Խորհրդային Միության անդամ երկրները հռչակեցին իրենց անկախությունը, այդ թվում ՝ Արցախի Հանրապետությունը:

Այժմ, 105 տարի անց, պատմությունը կրկնվում է: Մենք ոչինչ չսովորեցի՞նք: Մենք տեսնում ենք, որ աշխարհի երկրները դատապարտում են հարձակումները: Մենք լսում ենք երկրների ձայնը, որոնք հրադադար են պահանջում: Ինչպե՞ս պետք է «հրադադար» լինի, երբ նրանք են մեզ վրա կրակում: Եթե հայերը չպաշտպանվեն, նրանք կկործանվեն: Մարդկանց այս փոքր խումբը ինքնապաշտպանվում է համաշխարհային խոշոր տերությունների եւ բանակների դեմ: Եթե մենք չենք ցանկանում կրկնել 1915 թվականը, ապա աշխարհի երկրները պետք է ավելին անեն, քան պարզապես «խոսել»: Բավական չէ միայն Թուրքիային ասել, որ դադարեցնի զենքի ու բանակի մատակարարումը Ադրբեջան: ԱՄՆ-ին պետք չէ զորք ուղարկել կռվելու, Թուրքիայի վրա ազդելու բազմաթիվ եղանակներ կան: Եթե երկրները լուրջ են վերաբերվում, նրանք պետք է անհապաղ տնտեսական ամբողջական շրջափակման ենթարկեն Թուրքիային կամ կրակի վրա յուղ լցնող որեւէ այլ երկրի: Թուրքիան արդեն փուչ է դարձել ԱՄՆ-ի համար. ժամանակն է դադարեցնել խոսակցությունները եւ քայլեր ձեռնարկել:

1915-ի Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր: Խնդրում եմ, համաշխարհային տերություններ, թույլ մի՛ տվեք, որ Արցախի Հանրապետությունը դառնա 21-րդ դարի առաջին ցեղասպանություն:

ՍԹԻՎԵՆ Ռ. ԱՂԱՄՅԱՆ
Վարդանանց Ասպետների գերագույն հրամանատար

Վարդանանց ասպետներ, հայ տղամարդկանց եղբայրության սկզբունքների վրա հիմնված կազմակերպություն է, որի գործունեությունն ուղղված է հայկական ժառանգության եւ նրա մշակութային ավանդույթների պաշտպանությանը եւ պահպանմանը: Դրա կազմը ներկայացնում է հայ համայնքի ղեկավարության ողջ սպեկտրը: Այն հիմնադրվել է 1916 թ.-ին Ֆիլադելֆիայում եւ հիմնված է ԱՄՆ-ում `23 տեղական մասնաճյուղերից, որոնք աջակցում են հայկական գործերը ամբողջ աշխարհում:

Վարդանի ասպետների եւ դուստրերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք http://kofv.org

Անգլ. թարգմանեց՝
ԱՆԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ

Աշխարհի ճակատագիրը մեր ձեռքո՞ւմ է

⇨1 Բայց որ ինչ-որ գործընթացներ կան՝ նկատելի է, ու անգամ երեկ խորհրդարանական ճեպազրույցներում այդ կանխավարկածով մեկնաբանություններ էին անում նաեւ ԱԺ խմբակցությունների ներկայացուցիչները: Փաստորեն չժխտելով արտահոսք արված Մոսկվայի ու Ժնեւի հանդիպումների հնարավորությունը՝ իշխող խմբակցությունից ԱԺ պատգամավորության հանձնաժողովի նախագահ **Անդրանիկ Քոչարյանը** ենթադրեց, թե կողմերը փորձելու են ճնշակել իրավիճակն ու հակամարտության հետագա լուծման ճեւաչափ գտնել.«Բայց դուք ինքներդ եք տեսնում, որ այդքան երկարատեւ մարտերից հետո ամբողջ բանակցային գործընթացը կարող է փոխվել, եւ եթե նախկինում խոսվում էր հակամարտության խաղաղ լուծման, ստեղծված իրավիճակից ելք գտնելու մասին, ապա Ադրբեջանն ու Թուրքիան որոշեցին լուծել խնդիրը բիրտ ուժի կիրառման միջոցով: Նրանց դա չհաջողվեց, եւ այժմ այս ելքն այս իրավիճակից խնդիր է դարձել ամբողջ աշխարհի համար: Ղարաբաղի խնդիրն այլեւս բացառապես Ղարաբաղի խնդիրը չէ», նշեց նա՝ կարեւորելով, որ հիմա արդեն ամեն ինչ վճռելու է ընթացող պատերազմի ելքը: Այս մտի հետ համաձայն էին **Էդմոն Մարուքյանն** (Լուսավոր Հայաստան) ու **Վահե Էնֆիաջյանը** (ԲՀԿ): Մարուքյանը նշեց. «Հայկական կողմը պետք է ամեն ինչ անի, որ մարտի դաշտում ձեռքբերումը դիվանագիտական դաշտում արձանագրվի.«Հիմա ճանաչել Արցախը՝ նշանակում է փակել բանակցային ֆորմատը, իսկ Հայաստանը միջազգային հանրությունում ընկալվում է որպես ադեկվատ, խաղաբակիրթ գործընկեր, եւ մենք մեզ չպետք է պահենք այնպես, ինչպես պահում է թշնամին, դա մեր վերջին կրակոցն է»:

Ասել է թե՝ բանակցություններ կլինե՞ն, ձեւաչափը նույնը կմնա՞, թե կփոխվի՞, մեզ համար ելման կետի՞ց հարցերը կդրվեն, թե ոչ՝ այս բոլորը վճռում են մեր տղաներն իրենց արյունով: Ու սա նաեւ պատասխանն էր Արցախի հանրապետությունը միջազգայնորեն ճանաչելու հարցը հետաձգելու խնդրին՝ օրակարգը կախված է ռազմաճակատում մեր հաջողություններից եւ ֆոլվորին մեր սահմաններից վռնդելուց: Ամեն դեպքում՝ Ա. Քոչարյանը շեշտեց, որ հակամարտության կարգավորման բանակցություններն անհնար են առանց Արցախի մասնակցության, իսկ հանրապետության ճանաչման գործընթացն անխուսափելի է. «Այսօր անվտանգության գոտին արդեն այլ նշանակություն է ստացել եւ պետք է դառնա Արցախի անվտանգություն ապահովող գոտի: Այստեղ տարածքների վերադարձի մասին խոսելն անհեթեթ է դառնում, քանի որ օրակարգ է փոխվում»:

Իսկ առայժմ պատերազմ է, մենք բոլորս բեկման ենք սպասում ռամաճակատում, սպասում ենք ամենակարեւոր լուրին:

Իսկ թուրքադրբեջանական տանդեմը հավանաբար չի հաշտվում, որ հաջողություն չի կարող գրանցել եւ երեկ Էլի խփում էր Ստեփանակերտին ու Շուշիին՝ ի պատասխան ջախջախիչ հարվածների, որ հասցրեցին նրանց զինուժի ու բանակի մասակարարումը Ադրբեջան: ԱՄՆ-ին պետք չէ զորք ուղարկել կռվելու, Թուրքիայի վրա ազդելու բազմաթիվ եղանակներ կան: Եթե երկրները լուրջ են վերաբերվում, նրանք պետք է անհապաղ տնտեսական ամբողջական շրջափակման ենթարկեն Թուրքիային կամ կրակի վրա յուղ լցնող որեւէ այլ երկրի: Թուրքիան արդեն փուչ է դարձել ԱՄՆ-ի համար. ժամանակն է դադարեցնել խոսակցությունները եւ քայլեր ձեռնարկել:

կարհարվածներ սանձալով: Իսկ օրվա կեսից հետո նույնիսկ Ազգային ժողովի նախագահն անհանգստացավ. «Հենց նոր կրկին գրեցի մի շարք եվրոպական, արաբական, լատինամերիկյան երկրների խորհրդարանների նախագահներին, ինչպես նաեւ միջխորհրդարանական կազմակերպությունների ղեկավարներին՝ առաջարկելով ձեռնարկել ԱՆՀԱՊԱՂ, ԿՈՆԿՐԵՏ եւ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ միջոցներ », գրեց իր ՖԲ էջում նա՝ նկատի ունենալով հակամարտության կիզակետում կատարվողը:

Երեկվա ընթացքում մի բազմանշանակ լուր էլ կար, որ հավանաբար տակը մեծ ենթատեքստ ունի: Երեկ պատշոնից հեռացվել է ԱԱԾ պետը, որը վերջերս էր նշանակվել: Հաջորդեց **Նիկոլ Փաշինյանի** հանելուկային գրառումը ֆեյսբուքում, ըստ որի եղել են անձինք, որոնք առաջնագծում աղատեղեկատվություն տարածելով, նույնիսկ հրամայելով՝ սիրել են մեր զինվորներին որոշ մարտական դիրքեր թողնել թշնամուն: ԱԱԾում սկսվել է հետաքննություն, տեղեկացրել է վարչապետը, եւ որ՝ մեր հերոսների քիկունքը պետք է մաքրել դավաճաններից: Կապ ունի՞ դրա հետ Արգիշտի Քյարամյանը, թե ոչ, քե՞ ուղղակի չի վերահսկել վիճակը՝ հայտնի չէ:

Խոստովանեմ՝ միանգամայն կամավորագրվելու, մեր հերոս տղաների՝ սեփական կյանքը չխնայելու լուրի ֆոնին՝ այս լրատվությունը տհաճությամբ կարդացի, տարբեր զգացմունքների խառնուրդով: Իմ կարծիքով պատերազմի ժամանակ այսպիսի գործողությունների մասին հրապարակման կարիք չկա: Եթե նույնիսկ եղել է այդպիսի բան՝ իրավապահները թող սուսուփուս իրենց գործով զբաղվեն՝ բացահայտեն, քանի որ այս որակի լուրը հենց, այն էլ վարչապետի գրառմամբ, թշնամու դեմ պայքարի մեր միասնության վրա բացասական անդրադարձ ունեցող ինֆորմացիա ունի եւ հարցեր է առաջացնում առ այն, որ մի բան այն չէ: Երբեմն պետք է լռել հնանալ, հո մենակ բանակցային գործընթացի վերաբերյալ խորհրդապահությունը արդիական չէ՞:

Անձամբ ես երեկ բազմաթիվ մարդկանց հետ եմ զրուցել, ովքեր նկարագրում էին առաջնագծի զինվորների նվիրումն ու քաջությունը, քիկունքում առկա միասնությունը՝ չնայած քաղաքական տարաձայնություններին:: Իսկ արտերկրում առկա միասնության մթնոլորտի ցուցիչ է թեկուզ այս մի օրինակը. «Ազգ»ի Լոս-Անջելեսի թղթակից **Կարինե Դանիելյանի** որդին՝ **Արտավազդ Ջանբյանն** իր տարիների խնայողությունը՝ 101 հազար դոլար, որով տուն էր ուզում գնել, նվիրել է «Հայաստան » հիմնադրամին՝ հայոց բանակի համար: Թեեւ, իհարկե, բացասական բաների ականատես էլ ենք լինում երբեմն, ինչպես, օրինակ, որոշ մասնագիտացված խանութների դեպքում եղավ, երբ այս քանի օրը սկսել էին կրկնակի գներով վաճառել զինվորական կոշիկներն ու համազգեստը: Բայց դա կորչում-գնում է ընդհանուր նվիրվածության ու հայրենիքը պաշտպանելու հաստատակամության ֆոնին: Պիտի այնպես անենք, որ արժանի լինենք մեր նահատակված տղաներին:

Նշվել է Ստամբուլի կոտորածների 65-ամյակը

Ըստ «Բիանեթ» լրատվական գործակալության, Թուրքիայի HDP ընդդիմադիր ժողովրդա-դեմոկրատական կուսակցությունը հարգանքի տուրք է մատուցել Ստամբուլում 65 տարի առաջ կատարված կոտորածներին զոհ գնացած հույն, հայ, հրեա ժողովուրդների զոհերի հիշատակին, նշելով, որ 1955 թվի սեպտեմբերի 6-7-ին տեղի ունեցած կառավարական հովանավորչությամբ դեպքերը Թուրքիայի պատմության ամենագավալի եւ ամենաամոթալի էջերից են, որի ընթացքում 73 եկեղեցիներ, 8 սրբազան այլ վայրեր, 2 վանքեր եւ 5.500 տներ ու խանութներ (որոնցից 3.500-ը պատկանում էին հույներին) ավերվել ու թալանվել էին, պատճառելով մոտ 100 միլիոն դոլարի վնաս: Գործողությունները ծրագրված էին եւ գործադրվեցին NSS-ի՝ ազգային անվտանգության ծառայությունների կողմից: Պետությունը չի առերեսվել կատարվածի հետ, ներողություն չի խնդրել հրեա եւ հրիստոնյա իր քաղաքացիներից եւ չի փոխհատուցել նրանց հասցված վնասը:

Գործողություններին պատճառ էր հանդիսացել այն աղաետեղեկատվությունը, թե իբր Սալոնիկում (Հունաստան) գտնվող թուրքական հյուպատոսարանը (որտեղ Քեմալ Աթաթուրքն էր ծնվել 1881-ին) նախօրեին ռմբակոծվել է: Կոտորածների ժամանակ ոստիկանությունը չէր միջամտել:

Իրադարձությունների հետեւանքում բազմաթիվ հույներ արտագաղթեցին Թուրքիայից: Հույների թվաքանակը 1927-ի 119 հազարից 1978-ին նվազել եւ դարձել էր 7 հազար: Թուրքական արտգործնախարարության տվյալներով 2008-ին երկրում հունական արմատներով քաղաքացիների թիվը 3-4 հազար է, բայց «Human Rights Watch»-ը նշում է միայն 2.500:

Տ. Ծ.

Հայերը չեն կռվում հերոսների պես

Հերոսներն են հայերի պես կռվում

Արցախա-ադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի ողջ երկայնքով մարտերը շարունակվում են: Հազարավոր կամավորականներ արդեն համալրել են Պաշտպանության բանակի շարքերը: Բազմաթիվ են Մայր հայրենիքից ժամանողները, հարյուրավոր հայեր կան նաեւ Սիբիրից:

Հանրապետությունում արտակարգ դրահավաքը սկսվել է պատերազմի առաջին իսկ օրից: Զորակոչվում են պահեստազորում հաշվառված սպայական, ենթասպայական եւ շարքային կազմի մինչեւ 55 տարեկան քաղաքացիները: Նույնիսկ նրանք, որ զորացրվել են ամիսներ առաջ: Զինկոմիսարիատներ մարդկանց հոսքը չի դադարում, շարքերը զինկոմի կանչին չեն էլ սպասում, կամավոր են ներկայանում:

«Հայե՞ր, միացե՛ք, միացե՛ք, հայեր, Արցախն է մեզ կանչում, օգնության հասե՛ք», հենց այս հնչյուններն էին ուղեկցում կամավորներին, որոնք առաջնագիծ էին մեկնում հաղթական ոգով ու երգով՝ վստահ, որ մարտի դաշտում էլ երգելու համար ժամանակ կգտնվի:

Տիկին Գրետան որդուն է ճանապարհում, որը զինկոմիսարիատից են կանչել, ամուսինն էլ կամավորների շարքում է: Անհանգիստ է, բայց վստահ, որ լավ է լինելու«Մեր հողը թողած՝ ո՞ւր գնանք, սկուտեղի վրա մատուցե՞նք: Լավ է լինելու, Աստված մեզ հետ է: Բախում գրավելու են ու հաղթանակած հետ գան, սա լինելու է մեր վերջին պատերազմը»:

Երկու օր է զորակոչի հերթի մեջ սպասող Արամը ցանկանում է մեկնել Արցախ, բայց փաստաթղթային խճճուկի պատճառով ձգձգվում է: Վստահեցնում է՝ այնքան ժամանակ կսպասի զինկոմիսարիատի բակում, մինչեւ մեկնելու իր հերթը հասնի«Ժամանակին ծառայել եմ: Ավելի շատ փորձ ունեմ, քան էս երեխաները: Ավելի լավ չի՞ գնամ, իրենց կողքին լինեմ», -ասում է նա, հավելելով՝ այս երկիրը բառերով սիրելու երկիր չէ, այն գործել է սիրում ու պայքար պահանջում:

Պատերազմական զորակոչին անմասն չէր նաեւ 57-ամյա Սամվել պապին: Այն հարցին, թե տանը դեմ չե՞ն եղել որոշմանը, ծիծաղելով ասում է«Պառավիս ասել եմ գնում եմ, ասել ա՝ գնա՛»:

«Գնում եմ հաղթելու, պետք լինի՝ կյանքս էլ կտամ: Թողնեն չթողնեն մինչեւ Բախու մտնելու եմ: Էս հողի վրա իմ ախպերների արյունն է թափվել, մենք մեր հողի համար ենք կռվում, մենք արդար ենք, իսկ մեր հաղթանակն այլընտրանք չունի: Հակառակ կռվին, թիկունքն ամուր է լինելու, չես կարող հաղթել մի ազգի, որն առաջնագիծ գնալու համար ծանոթ է խառնում»,- ասում է կամավորներից մեկը ու ավելացնում՝ տանեցիներին միայն մի բան է մնում, հանգիստ լինել ու սպասել իրենց:

Զինկոմիսարիատի մոտ հավաքված կամավորներից շատերի համար տուն գնալու ու դեռ սպասելու հրահանգը դժգոհություն է առաջացնում: Նրանք շտապում են որքե առաջ դիրքեր հասնել:

Կամավոր Պատվական Աղայանը իր որոշման մասին ծնողներին չի տեղեկացրել, դեռ կհասցնի ասում է

«Զորահավաքի մասին լսել եմ, անմիջապես ներկայացել եմ զինկոմիսարիատ: Ուրախ ու հանգիստ պետք է գնանք՝ յուրաքանչյուրիս պարտականությունն է, պետք է կատարենք:Գնում եմ ու գիտեմ, որ ծնողներս որոշմանս մասին իմանալով ավելի շատ կհպարտանան իրենց զավակով»:

Վաղ առավոտից մինչեւ ուշ երեկո հանրապետության զինկոմիսարիատները լեցուն են, մարդիկ հեռանում են պատերազմ մեկնողների վերջին ավտոբուսի հետ: Ցավից բռունցք դարձած ժողովուրդը իրեն նվիրել է մի՛ նպատակի, եւ այդ նպատակի անունն է հաղթանա՛կ:

ՀԱՍՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստալրագրության 3-րդ կուրս

Հզորների թիկունքում կանգնած են է՛լ ավելի հզոր կանայք

- Ո՛չխ, գնում եմ: Ընդունեցին, տղեի մոտ եմ գնում:

20-ամյա աղջիկը խնդրեց անունը չնշել. ընտանիքի անդամները չգիտեն: Նա ուրախ թռչկոտելով դուրս եկավ ՊՆ-ի կից հասարակական խորհրդի գրասենյակից, որտեղ արդեն մի քանի որ է՝ կին կամավորների են գրանցում:

«Զինկոմիսարիատում չընդունեցին, այդ ժամանակ մի փոքր հուսահատվեցի, բայց տուն գնալու ճանապարհին երթուղայինում ռադիոյով լսեցի, որ Մոսկվայի 5 հասցեում Ոստիկանության փոխգնդապետ Մարինե Այրումյանը կանանց հավաք է կազմակերպում, որոնց ուղարկելու են ճակատ: Միանգամից ուղղությունս փոխեցի դեպի ՊՆ հասարակական խորհուրդ», մեզ հետ զրույցում ասաց 20-ամյա կամավորուհին, հետո ավելացրեց՝ եփել-թափել չի սիրում, բայց սահմանում ամեն ինչ էլ կանի, ուզում է որոշ շուտ հասնել սահման ու լինել զինվոր կողքին:

Մոսկովյան 5 հասցեի ոչ այնքան լուսավոր միջանցում չի դադարում մարդկանց հերթը: Բոլորը վստահ են՝ տիտի հաղթենք, բայց ցանկանում են այդ հաղթանակը կերտողների մի մասը կազմել:

Տարիքային սահմանափակումն էլ չի կանգնեցնում նրանց (ցուցակագրում են 18-55 տարեկան կանանց): 55 տարեկանից բարձր կանանց համար տիկին Մարինեն փոքրիկ ցուցակ է կազմել՝ ներառելով պահեստայինների ցանկում:

«17 տարեկաններն են գալիս, 55-ից բարձր տարիքայիններն են գալիս: 2 կին էին եկել՝ 67 տարեկան, խնդրում, աղերսում էին, ասում էին՝ եթե ծանոթ գտնենք, մեզ կվերցնե՞ք»,- ասաց Ոստիկանության փոխգնդապետ **Մարինե Այրումյանը**, ապա շարունակեց. «Կանայք սահմանին շատ են պետք ոչ միայն զենք բռնելու կռվելու համար, այլեւ լվացք, ճաշ, աման լվալ, երեխաների հետ նստել, ապաստարան իջնել, կացարան մաքրել, ամեն ինչ», սահմանում կատարվող աշխատանքներն է թվարկում տիկին Մարինեն եւ ասում՝ բոլորն էլ պատրաստ են ցանկացած գործ անել սահմանում, միայն թե օգնեն մեր ազգին:

Մի քանի օրում ավելի քան 600 կին է դիմել, բայց գրանցամատյանում նշվել է նրանցից 400-ի անունը, պայմանները խիստ են՝ տիկին Մարինեն չի կամավորագրում 18-ից ցածր տարիքային խմբի աղջիկներին ու կանանց, որոնք չորս եւ ավելի երեխաներ ունեն: Զրուցակիցս ասում է՝ առաջին երկու օրերին 35 կնոջ է մերժել:

Շատ են կանայք, որոնք պատրաստ են լինել զինվորի ու հայրենիքի կողքին եւ պայքարել՝ ինչպես իրենց հայրերը, եղբայրներն ու ամուսինները են պայքարում:

30-ամյա տիկին **Լիդան** ասում է. «Չեմ վախենում մահից, հայրենիքի համար պետք է ամեն ինչի պատրաստ լինել: Եվ թող ոչ ոք չկասկածի, եթե հերթը հասավ մեզ, մենք թույլ էակներ չենք, մենք պատրաստ ենք մեր տղաների հետ հավասար կռվելու եւ մեր հայրենիքը պաշտպանելու»:

Յուցակագրվածներից **Մանեն** վստահ պատասխանում է. այլուհից չի վախենում, բայց ո՛չ կրակել գիտի, ո՛չ էլ առաջին բուժօգնություն ցուցաբերել: Գիտի այն, որ ուզում է առաջնագծում լինել. «Եղբայրներս հիմա սահմանում են: Եթե իրենք էլ այնտեղ չլինեին՝ էլի գնալու էի: Ինչ էլ չգիտեմ՝ կսովորեմ»:

Հավաքվածներից յուրաքանչյուրն էլ ցանկություն ունի օգտակար լինել հայրենիքին: 25-ամյա **Սոսեն** ասում է. «Գնվելով թեկուզ սահմանի հետնամասում, ինչով կարողանանք կօգնենք մեր տղերին: Կարծում եմ՝ բոլորս էլ պարտավոր ենք այս իրավիճակում կանգնել մեր երկրի ու մեր բաջորդիների կողքին»:

Հայրենիքի ազատագրման ու պաշտպանության հարցում կանայք մեծ դեր են ունեցել, շարունակում են «ծառայել» ու լինել հզորների կողքին էլ ավելի հզոր ու հպարտ:

ՀԱՍՄԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՀՊՄՀ լրագրության 3-րդ կուրս

Ճոռակցություն Սերբիայից

ԲԱԲԿԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Գրող, թարգմանիչ, մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՀ-ում Սերբիայի Հանրապետության պատվո հյուպատոս

Արցախում կրկին պատերազմ է, կյանքի ու մահու պատերազմ...

Անհայրենիք ու fոչվոր ադրբեջանցին եւ թուրքը կրկին գլուխ են բարձրացրել, կրկին երազում են արնաքամ անել Հայոց հինավուրց ու բազմաչարչար հողը: Ամբողջ հայ ժողովուրդը մի մարմին դարձած զինվորագրվել է հանուն սուրբ նպատակի՝ Հայրենիքի պաշտպանության: Հայը հազարամյակներ շարունակ կյանքի ու մահու կռիվ տալով բարբարոս ու ոճրագործ թուրքի եւ երբեք գոյություն չունեցած ադրբեջանցու հետ՝ անդավաճան է մնացել իր պատմական հիշողությանը, հայրենիքի հանդեպ իր նվիրվածությանը: Այսօր, երբ հայոց Արցախի հողը կրկին հայտնվել է կրակներում, երբ կրկին թշնամու ոտքով ոտնը փորձում է տրորել մեր հինավուրց երկիրը, արծվասիրտ բազում հաջորդիները արժանի հակահարված են տալիս սրբապիղծ թշնամուն՝ ցույց տալով, որ հայերի հետ անհնար է խոսել պարսադրանքի լեզվով, որ Արցախը եղել եւ մնում է հայոց պատմական հայրենիքի անբաժան մասը:

Եղեռնազարկ հայ ժողովուրդը այլեւս թույլ չի տա, որ ադրբեջանաթուրքական ախտը վարակ դառնա տարածաշրջանում: Գուցե այսօրանից հետո աշխարհը հասկանա, որ Թուրքիան եւ Ադրբեջանը, որպես fաղցկեղածին մանրէներ, սպառնալիք են ոչ միայն տարածաշրջանի, այլեւ համայն մարդկության համար: 1915-ի ահասարսուռ ցեղասպանությունը դաս պիտի լինի հայերիս համար, որ երբեք չվստահենք ուրիշներին, մեր հույսը չդնենք օտարների վրա եւ հիշելով իմաստուն Խրիմյան Հայրիկի «Շերեփի պատմությունը», դասեր fաղենք անցյալից:

Առաջնորդվենք, ուրեմն, լուսահոգի Չարենցի մարգարեական խոսքերով. «Ո՛վ հայ ժողովուրդ, fո միակ փրկությունը fո հավաfական ուժի մեջ է»:

Այսօր, երբ միջազգային հանրությունն իր հայացքը սեւեռել է Արցախին, մեզ հետ են հայ ժողովրդի ազնիվ ու նվիրյալ շատ բարեկամներ, ովքեր սատար են լինում մեր ազգային-ազատագրական պայքարին՝ հավատալով, որ միայն հայրենիքի հանդեպ ունեցած անսահման սիրով պետք է փրկել հայրենի հողը: Ուրիշ տարբերակ չկա, մենք հաղթելու ենք...

Պատերազմի օրերին երբեք չեն դադարել սերբ բարեկամներիս՝ ինձ հղած ուղերձները, նամակները եւ հեռախոսազանգերը: Բոլորն էլ մտահոգ ու անհանգիստ են, բոլորն էլ իրենց համերաշխության ուղերձներով զորակցում եւ սատար են լինում հայերին ու Հայաստանին՝ դատապարտելով թրքացեղ բորենիների ոճիրները:

Քաղվածքներ ինձ ուղղված նամակներից.

◆◆◆

Սիրելի Բաբկեն, մտահոգված ու անհանգստացած եմ fո երկրում տեղի ունեցող իրադարձություններով: Ուշի ուշով հետեւում այդ ամենին: Սիրտս բաբախում է հանուն արժանապատիվ ու հերոսական հայ ժողովրդի:

ԴԱՐԿՈ ՏԱՆԱՍԿՈՎԻՉ
Բանասիրության դոկտոր, պրոֆեսոր

◆◆◆

Հարգելի բարեկամ Սիմոնյան, մտահոգ եմ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ տեղի ունեցող բախումների առիթով: Ցավոտ տողերս կապված են հայ ժողովրդի հետ:

ՄԻԼՈ ԼՈՄՊԱՐ
Բանասիրության դոկտոր, պրոֆեսոր

◆◆◆

Թանկագին Սիմոնյան, հայ ժողովրդին իմ սատարումը աներկբա է: Այս բախումների հետեւում, միանշանակ, առկա է թուրքական չարիքը, իսկ Ադրբեջանն ընդամենը խղճուկ մի ծառա է: Ապափ ցավ եմ ապրում տեսնելով, թե ինչպես են զավթիչները փորձում բզկտել fրիստոնեության սիրտը, այն նույն զավթիչները, ովքեր խլել են fրիստոնեության համընդհանուր սրբությունը՝ Արարատը: Այդ նույն զավթիչները չարիք են Եվրոպայի ու Սերբիայի համար, որոնց մենք երբեք թույլ չենք տվել անցնել Բոսֆորից այն կողմ: Մենք՝ սերբերս, կանխել ենք թուրքերին 1389-ի Կոսովոյի ճակատամարտում, սակայն կաթոլիկ աշխարհը նրանց թույլ տվեց հանգրվանել այնտեղ, ուր նրանց տեղը չէ:

Հայ ժողովուրդը, որն ամբողջ պատմության ընթացքում տառապանք է տեսել, առավել եւս՝ աշխարհում իր նմանը չունեցող 1915 թվականի ցեղասպանության ժամանակ, այս անգամ կարծում եմ թույլ չի տա, որպեսզի կրկնվի անցյալը: Ցեղասպան Թուրքիան առ այսօր չի պատժվել իր գործած ոճիրների համար:

Քեզ հետ եմ, Սիմոնյան եղբայր, fո արդարամիտ ու պայծառ ժողովրդի հետ:

ԴՐԱԳԱՆ ՄՐԱՎԻՉ
Բանաստեղծ

◆◆◆

Սիրելի Բաբկեն, անսահ մտահոգությամբ տեղեկացա Արցախում Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողությունների մասին: Ցավում եմ, որ զինվորներ եւ շարfային fաղաfացիներ են զոհվել, ցավում եմ այն ամենի համար, որ վերապրում է հերոսական հայ ժողովուրդը: Կասկած անգամ չունեմ, որ այդ հարձակումը նախապատրաստել են Ադրբեջանը եւ Թուրքիան: Աշխարհը հասկացել է, որ Թուրքիան ներգրավված է այս պատերազմում:

Հավատում եմ, որ աշխարհում կան ազատասեր ազգեր ու պետություններ, որոնք ձեզ հետ միասին ընդդիմանալու են չարին, որին կրկին ականատես եք: Հիմա ամենակարեւորը առաջին հարվածին դիմանալն է: Պետք է ներգրավել սփյուռքում ապրող ձեր հայրենակիցներին, որոնք որ առաջ ցանկանում են գալ եւ ընդգրկվել հայրենիքի պաշտպանությանը: Ողջ պատմության ընթացքում հայերը պաշտպանել են իրենց հայրենիքը: Վստահ եմ, որ կպաշտպանեն նաեւ Արցախը:

Սիրելի եղբայր, գիտեմ, թե որքան դժվար է քեզ համար՝ ականատես լինել զավթիչների դաժանություններին: Ինձ համար՝ նույնպես:

ԼՅՈՒԲՈՄԻՐ ՉՈՐԻԼԻՉ
Բանաստեղծ

◆◆◆

Թանկագին բարեկամ, մտածում եմ fո եւ fո ժողովրդի մասին: Բնականաբար, պարզ է ում եմ սատարում:

ՍԱՎԱ ԴԱՄՅԱՆՈՎ
Արձակագիր

◆◆◆

Սիրելի բարեկամ, թող Աստված պահպան լինի fո ազգին: Երբ լուրերով լսեցի պատերազմի մասին, իսկույն քեզ հիշեցի, հասկացա, որ Երեւանում ես: Պատերազմները ոչ ոքի երջանկություն չե՛ն բերել: Տա Աստված, որ ամեն բան ավարտվի բանակցությունների միջոցով եւ խաղաղություն հաստատվի:

Արդարությունը պիտի հաղթի՛:

ԺԵԼԿՈ ՍԱՐԻՉ
Արձակագիր

◆◆◆

Սիրելի Բաբկեն, շատ անհանգստացած եմ ձեր տարածաշրջանի իրադարձություններով: Սիրտս Հայաստանի ու հայ ժողովրդի հետ է:

ՆՈՎՈ ՏՈՄԻՉ
Լրագրող

◆◆◆

Սիրելի Բաբկեն, անսահ ցավով տեղեկացա ձեր տարածաշրջանում տեղի ունեցող ռազմական իրադարձությունների մասին: Մտերս ձեզ հետ են: Աղոթում եմ ձեզ համար:

ՄԻԼԱՆ ՎԻՋԻՉ
Բանաստեղծ

Շնորհակալ ենք մեզ սատարելու համար, սերբ եղբայրներ: Շնորհակալ ենք, որ լավ ես գիտակցում մեր արդար պայքարի խորհուրդը եւ այս բախտորոշ պահին ձեր զորակցությունն ես հայտնում հայ ժողովրդին: Մենք գիտենք գնահատել բախտակից ու հոգեհարազատ սերբերի արժանավայել կեցվածքը, իսկ ձեզ համերաշխության խոսքը մի նոր կամուրջ կդառնա Հայաստանի ու Սերբիայի միջեւ:

Ֆեյսմատրս

Սեպտեմբերի 27-ի առավոտյան ժամը 7:10-ին շփման գծի ողջ երկայնքով ադրբեջանական կողմը ակտիվ հրետակոծություն էր սկսել՝ թիրախավորելով նաեւ խաղաղ բնակավայրերը, ավելի ուշ՝ նաեւ մայրաքաղաք Ստեփանակերտը:

Պաշտպանական բանակը հաջողությամբ դիմակայել է հարձակմանը:

Այս հաղորդագրության հետ միասին՝ Արցախի պաշտպանական բանակը եւ Հայաստանի պաշտպանության նախարարությունը կոչ արեցին՝ վստահել միայն պաշտոնական աղբյուրներին եւ զգոն լինել՝ թշնամական տեղեկատվական հոսանքներին տրվելուց առաջ:

Ադրբեջանական fարոզչամեքենայի հերթական տեղեկատվական սադրանքը սպասեցնել չտվեց:

Հակառակորդի պաշտպանության նախարարության մամլո խոսնակը սեպտեմբերի 27-ին տարածեց հաղորդագրություն, համաձայն որի՝ ադրբեջանական բանակը գրավել է 6 բնակավայր:

ՀՀ ՊՆ մամլո խոսնակ՝ Շուշան Ստեփանյանը հաղորդագրություն տարածեց հայտարարելով, որ այն չի համապատասխանում իրականությանը:

Այս ամենին հաջորդեց սեպտեմբերի 29-ի ՀՀ Արտաքին գործերի նախարարության հայտարարությունն Ադրբեջանի ՊՆ ապատեղեկատվության վերաբերյալ, ըստ որի հիմնովին հերքվեց Ադրբեջանի պաշտպանության նախարարության Հայաստանին ուղղված մեղադրանքը՝ Հայաստանի Վարդենիսի շրջանից Ադրբեջանի Դաշքեսանի շրջանը հրթիռակոծելու վերաբերյալ:

Այս ապատեղեկատվությունը բացարձակ սուտ էր եւ նպատակ էր հետապնդում հող նախապատրաստել մարտական գործողությունների աշխարհագրության ընդլայնման, այդ թվում՝ ագրեսիա իրականացնել Հայաստանի Հանրապետության դեմ:

Հոկտեմբերի 1-ին Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը գրել է, թե ադրբեջանական բանակի ուղղաթիռը խոցելու մասին հայկական լուրը կեղծ է եւ բանակի ավիացիոն բոլոր միջոցները տեղում են:

Այս հայտարարությանն ի պատասխան ՀՀ Պաշտպանության նախարարությունը հայտարարություն տարածեց նշելով, որ գուցե եւ բանակի ավիացիոն միջոցները տեղում են, սակայն չմոռանանք, որ մարտական գործողություններին մասնակցում է նաեւ Ադրբեջանի պետական սահմանադաւ ծառայությունը, որը բանակի կազմի մեջ չի մտնում, իսկ այս մարտերում սահմանադաւ պահների կորցրած առնվազն 1 ուղղաթիռի մասին մենք արդեն գիտենք:

Ավելի վաղ մեր պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ հոկտեմբերի 1-ին արցախա-ադրբեջանական հակամարտության գոտու առաջնագծի հարավային հատվածում արցախյան ստորաբաժանումները խոցել են հակառակորդի մարտական ուղղաթիռ, որն ընկել է Իրանի տարածքում:

Այս օրերին՝ ՀՀ Պաշտպանության նախարարության եւ ԱՀ Պաշտպանական բանակի մամլո ծառայությունները հնարավոր միջոցներով ամեն բան կատարեցին՝ ադրբեջանական fարոզչամեքենայի հերթական տեղեկատվական սադրանքները բացահայտելու համար:

ԷԼԱՂԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՀՊՄՀ, լրագրության 3-րդ կուրս

Վարդան Տողանյան. «TUMO MOSCOW»-ը կդառնա Մոսկվայում Հայաստանի նոր դեմքը»

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ

Մոսկվայում «Ազգի» հատուկ թղթակից

Ռուսաստանի մայրաքաղաքում օրերս հանդիսավորությամբ բացվեց թվով 3-րդ միջազգային «Թումո» կենտրոնը՝ TUMO MOSCOW-ը:

Փարիզից ու Բեյրութից հետո այժմ արդեն նաեւ Մոսկվայի պատանիները հնարավորություն կունենան ծանոթանալ «Թումոյի» ծրագրերին, կիրառել ամենանորարար տեխնոլոգիաները ու հմտանալ նմանատիպ մի շարք ժամանակակից այլ ոլորտներում:

Այդ օրը հանդիսությանը ներկա մոսկվաբնակ մեր շատ հայրենակիցներ ինձ հաճախ էին հարցնում՝ իսկ ի՞նչ է նշանակում «Թումո», հասկանո՞ւմ է:

«Ավելի շուտ ժառանգություն է»,- ասացի ես: Իսկ թե ինչպես է առաջացել «Թումո» անվան միտքն ու ինչ փորձություններով է այն անցել մինչեւ Փարիզ ու Բեյրութ հասնելը, պատմում է Թումոյի համահիմնադիր եւ զարգացման տնօրեն **Բեկոր Փափազյանը**:

- 2011 թվականի բացումից տարիներ առաջ, երբ դեռ Երեւանում առաջին «Թումո» կենտրոնն էր կառուցվում, շինարարության կողով անցնող տեղի պատանիներից հաճախ լսում էինք «Թումո եմ գնում» տարահայտությունը: Մենք սկսած հետաքրքրվեցինք, թե այդ ուր էին նրանք պատրաստվում գնալ: Ինչպես գիտեք, կենտրոնը գտնվում է Թումանյանի գեղեցիկ այգու հարեւանությամբ, որը կրում է ամենաստեղծարար ու սրամիտ հայ գրողի, բանաստեղծ, արձակագիր ու հասարակական գործիչ Հովհաննես Թումանյանի անունը, կամ ինչպես երեխաներն են սիրում կոչել նրա այգին՝ «Թումո»: Շուտով շինհրապարակ այցելելը մենք էլ սկսեցինք կոչել «Թումո գնալ», ու անունն այդպես էլ մնաց: Հետագայում այն դարձավ կենտրոնի պաշտոնական անունը, գրվեց մեծատառով



ու վերջապես մտավ բնակիչների առօրյա բառապաշար:

2011 թվականին Երեւանում պաշտոնապես բացվեց «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների առաջին կենտրոնը, որը պատանիների համար նախատեսված կրթական կենտրոն է՝ մասնագիտացված դիզայնի եւ տեխնոլոգիների ոլորտում:

Կենտրոնի նախաձեռնող ու հիմնադիրն է ամերիկահայ բարերար, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության ժողովի անդամ, «Սիմոնյան կրթական հիմնադրամի» հիմնադիր Սեմ Սիմոնյանն իր տիկնոջ՝ Սիլվա Սիմոնյանի հետ: Սեմ Սիմոնյանը հիմնադիրն է նաեւ ԱՄՆ-ում գործող «Epygi Labs AM» ընկերության, որը զբաղվում է բարձր տեխնոլոգիաների ծրագրային նախագծումով եւ որի մասնաճյուղը 1997-ից ի վեր գործում է նաեւ Հայաստանում:

Սեմ Սիմոնյանը ծնվել է Լիբանանում, միջնակարգ կրթությունը ստացել Բեյրութի Վահան Թեքեյան եւ ապա Հովակիմյան-Մանուկյան միջնակարգ դպրոցում:

Եվ այսպես, Թումոյի եւ Genome Ventures ընկերության համագործակցության արդյունքում Մոսկվայի թումոցիները նախնական փուլում կկարողանան հմտանալ հետեւյալ 8 ոլորտներում՝ ծրագրավորում, գրաֆիկական դիզայն, ռոբոտաշինություն, 3D մոդելավորում, խաղերի ստեղծում, երաժշտություն, ֆիլմերի ստեղծում եւ անիմացիա: Ապագայում կբացվի եւս 6 ուղղություն՝ կայքերի ստեղծում, նկարչություն, լուսանկարչություն, նոր մեդիա, շարժական գրաֆիկա եւ ստեղծագործություն:

«Հատկանշական է, որ Մոսկվայում մենք հայտարարում ենք նորարարական հիբրիդային համակարգ՝ առցանց եւ կենտրոններում դասերի համադրություն, որը մենք վերջերս մշակեցինք՝ նոր իրականությանը հարմարվելու համար: Վստահ ենք, որ ծրագիրը, որն արդեն սիրվել է եվրոպացի պատանիների շրջանում, նրով, նրա ճաշակի, մտքի եւ ինտելեկտուալ կարողությունների շնորհիվ է հաջողվել հայ մշակութային ժառանգության արժանի ներկայացումը Ռուսաստանում:

Ողջունելով մոսկովյան «Թումոյի» ծնունդը՝ **Վարդան Տողանյանը** նշեց, որ ժամանակակից աշխարհում փոխվում է ամեն ինչ, փոխվում են հաղորդակցության ու մարդկանց հետ շփումների միջոցները, եւ այս հարթակը դառնում է Մոսկվայում Հայաստանի Հանրապետության նոր դեմքը:

- Մենք կարողացանք Ռուսաստանում ներկայանալ կրթական նոր տեխնոլոգիական հարթակով, որը լիովին փոխում է իմացությունն այսօրվա Հայաստանի մասին: Մոսկվայի պատանիները նույնպես կսպասեն «Թումոյի» կրթական ծրագրին ծանոթանալու եւ ամենաժամանակակից ոլորտներում հմտանալու հնարավորություն: Ի թիվս Բեյրութի եւ Փարիզի կենտրոնների, սա թվով երրորդ միջազգային «Թումո» կենտրոնն է: Կենտրոնը Հայաստանի անունը բարձր է պահում միջազգային տեխնոլոգիական ասպարեզում, հայկական կրթական եւ այլ տեխնոլոգիաների արտահանման համար նոր հորիզոններ է ձեւավորում: «Թումոն» նորարարական կրթական ծրագիր է դիզայնի եւ տեխնոլոգիաների միջակայքում: «Թումոյում» պատանիները սովորում են, որովհետեւ ունեն դրա ցանկությունը: Նրանց տրվում են անհրաժեշտ բոլոր գործիքները սեփական ներուժը առավելագույնս իրացնելու համար: Ուսանողներն իրենք են նախագծում սեփական կրթական շավիղը գործնական վարժանքների, դասընթացների ու աշխատարանների միջոցով:

Դեսպանը շնորհակալություն հայտնեց այս հիանալի գաղափարը Մոսկվայում կյանքի կոչելու համար ջանքեր չխնայած բոլոր գործընկերներին:

TUMO MOSCOW կենտրոնը գտնվում է Մոսկվայի կենտրոնում, «Մոսկվա Սիթի» գործարար կենտրոնի հարեւանությամբ, նրա մակերեսը կազմում է 1000 ք/մ, ունի անհրաժեշտ բոլոր ուսումնական տարածքները՝ ինքնուսուցման հարթակներ, դասընթացների սենյակներ, սեփական ձայնագրման ստուդիա, ռոբոտաշինության եւ համակարգչային դասարաններ եւ այլն:

Մոսկվայի «Թումոյում» սովորելու է շուրջ 2000 աշակերտ եւ ուսանող: Ուսումը վճարովի է, սակայն կենտրոնը տարեկան մեծ թվով դրամաշնորհներ է հատկացնելու անվճար ուսուցման համար: Դասընթացները մեկնարկելու են արդեն այս տարվա հոկտեմբերին:

Առաջիկայում նախատեսվում է նմանատիպ կենտրոնների բացում ինչպես ՌԴ մի քանի քաղաքներում, այնպես էլ Բեռլինում, Տիրանայում, Տոկիոյում, Կալիֆոռնիայում, Նյուրնբերգում եւ աշխարհի այլ քաղաքներում:

Բելգիական բանասիրական հանդեսը Դանիել Վարուժանի մասին

«Դանիել Վարուժան: Հայ բանաստեղծը Գենտում: 100 տարի անց» խորագրի ներքո բելգիական բանասիրության եւ պատմության «The Revue Belge de Philologie et d'Histoire» հանդեսը վերջերս լույս է ընծայել 2019-ի իր 97-րդ համարը, որը մասնավորապես նվիրված է արեւմտահայ բանաստեղծական մտքի զարգացման նոր աստիճան ձեւավորած Դանիել Վարուժանին: Գենտի համալսարանի պրոֆեսորներից՝ Փիթեր վան Նուֆելենի խմբագրությամբ հատորը նպատակ է հետապնդում նախ լույս սփռել Բելգիայի եւ Օսմանյան կայսրության միջեւ այդ ժամանակ գոյություն ունեցող ուսանողական փոխանակումների եւ այդ տարածաշրջանից եկող ուսանողների փորձառությունների վրա եւ երկրորդ՝ խորամուխ լինել այն ազդեցությանը, որ Գենտի համալսարանում անցկացրած տարիները (1905-1909) ունեցել են Վարուժանի մտավորի եւ գեղագիտական հետագա զարգացման վրա:

Պարբերականի էջերում տեղ են գտել հոդվածներ Գենտի համալսարանում սովորող օսմանցի ուսանողների (Պ. դը Մեսսեմեքր եւ Ս. Վերբուգեն), հայկական հարցի վերաբերյալ բելգիացի հասարակության կարծիքի (Հ. Ալուլ եւ Հ. դը Սմայելի), Դ. Վարուժանի կենսագրության Գենտի շրջանի (Սիմոն Փայասլյան) եւ նրա այնտեղ կատարած ֆրանսերեն հրատարակությունների (Է. Դելասենսերի) մասին: Հոդվածներ ունեն նաեւ Գ. Պլեյանն ու Մ. Նշանյանը: Առաջաբանում ներկայացված է Դանիել Վարուժանի կյանքն ու ստեղծագործությունները:

Հ. Ծ.

Թուրքական վտանգը Եվրոպայի շեմին

Անսպասելի ցույց Բրյուսելում

ԱՐԱՔՍ ՍԱՖԱՐՅԱՆ

Բրյուսել

Մինչ հայ- ադրբեջանական or-orի ահագնացող պատերազմում կյանքի ու մահվան մարտեր են ընթանում, աշխարհասփյուռ մեր հայրենակիցները միջազգային տարբեր հարթակներում մեկ այլ՝ տեղեկատվական- դիվանագիտական պատերազմ են մղում: Հաշված ժամերի ընթացքում աշխարհի հայերն , ամուր բռունցք դառնալով, բողոքի ալիք բարձրացրին միջազգային կարեւորագույն հարթակներում ՝ աշխարհին Ժողովրդավարություն, մարդասիրություն եւ հատկապես խաղաղություն ղարոզող գերհզոր պետություններին կոչելով կանխել Ադրբեջանին սատարող Թուրքիայի վտանգավոր հեռահար հյլերը:

Եվ եթե նախորդ շաբաթ միջազգային լրատվամիջոցները հայ-ադրբեջանական պատերազմը ներկայացնում էին վերապահումներով, կցկտուր լուրերով եւ լրջագույն փաստերին չտիրապետելով, գուցեեւ միտումնավոր շրջանցելով իրականությունը, ապա շաբաթվա ընթացքում լրատվության մատուցման շեշտն անհամեմատ փոխվեց: Միանշանակ ոչ այն պատճառով, որ միջազգային լրատվամիջոցներն առավել խորությամբ սկսեցին ուսումնասիրել արցախյան հիմնախնդիրը, այլ պարզապես հաշվարկելով առկա պատերազմի ռիսկերը եւ հասկանալով, որ Եվրոպայի շեմին ահագնացող պատերազմը վաղ թե ուշ թակելու է նաեւ իրենց դուռը:

Շաբաթվա ընթացքում Բելգիայի մեր հայրենակիցներն երկու անգամ բողոքի ձայն բարձրացրին Եվրամիության հրապարակում: «**Ազգ**»ի նախորդ համարում մենք անդրադարձել ենք բելգիահայերի նախորդ ցույցին, իսկ երկու որ առաջ , հոկտեմբերի 7- ին, կայացավ երկրորդը, որն առանց չափազանցելու աննախադեպ էր բելգիահայերի պատմության մեջ: Վաղ առավոտից հայերը փակել էին Եվրամիության հրապարակ տանող բոլոր ճանապարհները : Բազմահազար հայեր, հայկական եռագույնը ծածանելով կարծես մարտի էին գնում: Բրյուսել էին եկել ոչ միայն երկրի հեռու ու մոտ քաղաքներից, այլ նաեւ Լյուքսեմբուրգից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Հոլանդիայից, Իսպանիայից: Հայերին աջակցում էին հունական, քրդական, եզդիական, ասորական համայնքները: Մեր հայրենակիցներն այս անգամ միտումնավոր էին ընտրել առավոտյան ժամի բողոքի այս ձեւը: Սովորաբար առավոտյան աշխատանքային ժամերին Եվրամիության կիլոմետրով ձգվող բանուկ այդ տարածքը գերծանրաբեռնված է, Իսկ այդ օրը հայերի հոծ բազմությունն առավոտյան ժամը 8-ից մեքենաներով փորձեցին գրել ցուցարարներին, սակայն հայերն համառորեն չէին հեռանում:

Բելգիահայերն տագնապի մեջ են, գործի են դրվել բոլոր հնարավոր միջոցներն հայրենիքին օգնելու համար: Պատերազմի սկսման առաջին իսկ օրերից ԵՄ տարբեր մակարդակներով Ադրբեջանին եւ Թուրքիային դատապարտող-պատժիչ հայտարարություններով հեղեղել են ԵՄ տարբեր այրաններին: ՀՅԴ Եվրոպայի հայ դատի գրասենյակից տեղեկացանք, որ հոկտեմբերի 5-ին, դարձյալ Եվրախորհրդարանի խաղաղական բոլոր խմբակցություններից 48 պատգամավորներ, կիպրացի եվրոպատգամավոր **Լուկաս Ֆուրլասի** նախաձեռնությամբ նամակով դիմել են ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության խաղաղասության հարցերով բարձր ներկայացուցիչ եվրոհանձնաժողովի փոխնախագահ **Ժոզեֆ Բորելիին**՝ կոնկրետ խլյեր ձեռնարկել, ճնշում գործադրել Թուրքիայի վրա, սիրել զերծ մնալ որեւէ միջամտությունից, որը ապակայունացնում է եւս մեկ տարածաշրջան՝ Հարավային Կովկասը: Միաժամանակ հիշեցրել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկած հրադադարի խախտման հետաքննական մեխանիզմի տեղադրման անհրաժեշտությունը կարող է կանխել այն իրավիճակը, երբ կողմերը միմյանց մեղադրում են մահացու հարձակումներ սկսելու մեջ: Հոկտեմբերի 7 Եվրախորհրդարանի լիագումար նիստին 68 պատգամավորներից միայն 5-ն աջակցել Ադրբեջանին:

Որքան էլ որ համայն հայությունն այս օրհասական պահին աշխարհի ուշադրությունն է սեւեռել սանձարձակ Թուրքիային դատապարտելու վրա, այնուամենայնիվ , երկակի սանդարտներով հղկված եվրոպական քաղաքականությունն իրականում անզոր է գնալ կոնկրետ խլյերի:

Արդարության ջատագով, ժողովրդավարություն, հանդուրժողականություն քարոզող Եվրոպան այլեւս անկասկած սպառման եզրին է: Արդեն որերորդ անգամ Եվրոպան հայտնվելով Թուրքիայի խառնակչության թիրախում՝ այնուամենայնիվ կոնկրետ պատժամիջոցների չի դիմում:

ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան ոչ միայն ռազմական առումով գերհզոր պետություն է տարածաշրջանում, այլեւ՝ ինքնական գործողություններ հրահրող , հնուս հաշվարկներով պատասխանատվությունից ճողոպրող միջազգային հայտնի սադրիչ:

Եվ եթե այսօր համայն հայությունը հսկայ աղաղակներով միջազգային այսյաններին հորդորում է դատապարտել ՆԱՏՕ- ի անդամ Թուրքիային, իսկ Եվրոպան կիսով չափ աչք փակելով գործնական խլյերի չի գնում ,ապա սա եւս Թուրքիայի ճշգրիտ հաշվարկների արդյունք է: Թուրքիան խաղում է այն խաղաքարտով, որ ՆԱՏՕ-ն խոնարհ հակասության մեջ է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանը Եվրոպայի աչքում համարվում է Հայաստանին սատարողն ու ռազմավարական գործակիցը: ՆԱՏՕ- ի համար առաջնայինը քաղաքական իր շահերն են, հետեւաբար հանուն Հայաստանի Հյուսիս -ատլանտյան դաշինքը, ուր որոշումներն ընդունվում են կոնսենսուսի սկզբունքով, Թուրքիային դատապարտելու գործնական խլյերը անշուշտ զերծ կմնա եւ դեմ չի գնա իր դիրքորոշմանը, որքեզի անուղղակի ձեւով չաջակցի Ռուսաստանին:

Տարիներ ի վեր Թուրքիան Սիրիայի փախստականներին դեպի Եվրոպա ներհոսի սպառնալիքով շանտաժի է ենթարկում Եվրոպային ու միլիարդներով գումար կորզում Եվրամիությունից: Իսկ Եվրոպան հանուն տարածաշրջանի խաղաղության լռում է, անզոր է Թուրքիայի դեմ պատժիչ խլյեր ձեռնարկել: Եվ տեսնվում է, որ ամեն անգամ Թուրքիան արկածախնդիր իր ծրագրերը հյուսելով առաջ է գնում եւ ամեն անգամ անպատիժ մնում:

Մի ամբողջ շաբաթ եվրոպատգամավորներն աղաղակում են. որ պատերազմ է Եվրոպայի շեմին, այն կարող է տարածվել ու տարածաշրջանից դուրս գալ, սպառնալ միջազգային անվտանգությանը, եւ չկանխելու դեպքում հետեւանքներն անկանխատեսելի կլինեն: Ջզսպելով Թուրքիային՝ Եվրոպան ներքաշվում է մի նոր վտանգի մեջ:

Բայց ցավոք Եվրոպան, ինչպես նախկինում , այսօր էլ դեռ լուռ է. բանավոր հայտարարություններից վեր չի բարձրանում, չկան գործնական խլյեր, իսկ սահմանին պատերազմն օրեցօր նորանոր կյանքեր է խլում:

ՎԱՉԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

խղճմտեղ

Պատերազմ, որը սահմանելու է նոր ռազմաքաղաքական հարաբերություններ

Սեպտեմբերի 27-ի վաղ առավոտյան, Սիրիայից եւ Լիբիայից բերված վարձկաններով, Թուրքիայի հրամկազմով ու զանազան զինատեխնիկայի կիրառմամբ՝ արցախա-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով Ադրբեջանի ձեռնարկած լայնամասշտաբ հարձակումն անակնկալի չբերեց եւ ոչ մեկին, ո՛չ տարածաշրջանային, ո՛չ միջազգային ուժերին:

Դրանից առաջ՝ սեպտեմբերի 25-ին ԱՄՆ-ը, տարածաշրջանում սեփական խաղաքական կշիռը ցույց տալու մղումով՝ Հայաստանում եւ Ադրբեջանում իր դեսպանատների միջոցով հայտարարություն տարածեց, որում ԱՄՆ խաղաքացիներին հորդորում էր երկու երկրների սահմաններին մոտ՝ չգնալ:

Ռազմական գործողությունների այսպիսի ծավալը ակնհայտ է դարձնում, որ արեւմտյան ուժերը, օգտվելով Էրդողանի ագրեսիվ վարքագծի դրսեւորումից, փորձում են իրենց ցանկությունները իրականացնել տարածաշրջանում, իսկ դրա համար ամենահարմար վայրը Արցախն է: Ռուսաստանն ու Իրանը մի կողմից, Թուրքիան մյուս կողմից բախվում են երկու ճակատում՝ Սիրայում եւ Լիբիայում, որտեղ վերջին շրջանում ԱՄՆ ու Թուրքիան նահանջում են դանդաղորեն, բայց հաստատուն քայլերով:

Այս իրավիճակում Էրդողանին հարկավոր է մեկ այլ տարածք, որտեղ հրահրելով նոր պատերազմ, կկարողանա Ռուսաստանի եւ Իրանի հետ ինքնարկել Սիրիայի ու Լիբիայի հարցերը, հենց դրա համար սկսվեց լայնամասշտաբ պատերազմ Արցախում՝ լուրջ հաղթանակի ակնկալիքով: Էրդողանը ծրագրում էր ակնթարթորեն գրավել Արցախի հարավային՝ Վարանդայի (ֆիզուլի) շրջանը: Ինչը կնշանակեր վտանգել Իրանի հյուսիսային սահմանները եւ նվազեցնել Ռուսաստանի դերը տարածաշրջանում, միեւնույն ժամանակ հնարավորություն կտար այդ երկրների թրքախոսների շրջաններում պանթուրքիստական նկրտումներ զարգացնելու:

Այս հարցում ԱՄՆ-ի դիրքորոշումը շատ հստակ է՝ իրագործել Փոլ Գոբլի ծրագիրը, այն է՝ Մեղրին փոխանակել Արցախի հետ, եւ դրանով հարվածել Իրանին ու Ռուսաստանին: Ամենավառ արտացոլումն այն է, որ ԱՄՆ-ն, ցույց տալով սկսվելիք պատերազմի մասին իր լավատեղյակությունը, ոչ միայն ոչինչ չարեց պատերազմը կանխելու համար, այլեւ ավելին՝ լռեց, երբ ամիսներ շարունակ Թուրքիան իր աչքի առաջ տարբեր տեսակի զինատեխնիկա եւ իսլամական ահաբեկիչ վարձկաններին տեղափոխեց Ադրբեջան: Իսկ լռությունը պատերազմի նախօրեին եւ այնուհետեւ հավասարազոր է խրախուսման: ԱՄՆ-ն իր հնազանդ կամակատար Ադրբեջանին մշտապես օգնելով արտահովել է իր վերահսկողությունը Միջին Ասիայից դեպի Եվրոպա գնացող նավթատարների եւ գազատարների վրա:

Եվրոպայի մասին խոսելն անիմաստ է, քանի որ Անգլիայի ԵՄ-ից դուրս գալուց հետո եվրոկառույցները կոմայի մեջ հայտնվեցին, եւ եթե Գերմանիան ինքն իրեն թափ չտա, ապա ԵՄ-ն կմնա միայն հայտարարությունների սահմաններում, իսկ գործնականում զերծ կմնա որեւիցե խլյից, քանի որ թուրքերը փախստականների հոսքերը կրկին կուղղեն դեպի Եվրոպա՝ բացելով իրենց սահմանները...

Ռուսաստանն ուղղակի պատերազմի մեջ չներգրավվելու նպատակով դեռ զսպում է իրեն, եւ բավարարվում միայն հայտարարություններով ու կողմերին խաղաղության կոչեր անելով: Հակառակ պարագայում իրավիճակը կդառնա անկառավարելի, բայց եթե պատերազմն անխուսափելի դառնա, ապա Ռուսաստանի ինքնազսպումը տեղի կտա: Այսինքն Ռուսաստանը, ինչպես միշտ, կարող է 3 ժամ ուշանալ...

Փաստորեն, Անդրկովկասում նոր ճակատ բացելով, Թուրքիան փորձում է վերադասավորել իր ուժերը Սիրիայում եւ Լիբիայում:

Իսկ այստեղ վերջին խոսքն ասելու է Հայ ժողովուրդը...

30.09.20

ՎԼԱԴԻՄԻՐ ԴԱՐԲԻՆՅԱՆ
Անվտանգության հարցերով փորձագետ

Հատուկ ծառայությունների աշխարհից «Դոսյե». II մաս

Տեղեկատու աղբյուրների որոնում եւ ձեռք բերում, տեղեկատվության հավաքում եւ վերլուծություն, գաղտնակյաց տեխնիկական միջոցառումներ, գործակալական ցանց, վստահելի անձինք, ազդեցության գործակալների ձեռք բերում եւ օգտագործում, ագիտացիոն աշխատանք, - ահա՛ հատուկ ծառայությունների աշխատանքի ոչ լրիվ արտենալը:

Եվ սա պետք է բոլոր պետություններին, անխտիր, անողայման, նույնիսկ եթե աշխարհի բոլոր երկրների հետ սերտ բարեկամական կապեր ունես: Ցավոք այդպես չի լինում, կան գեոպաղաքական, ռազմաքաղաքական, տնտեսական շահեր, կրոնադավանաբանային, պատմական, տարածքային խնդիրներ եւ այլն, եւ այլն: Իհարկե, բարեկամ, դաշնակից երկրներ պետք են, ինչպես նաեւ գործընկեր եւ հատուկ ծառայություններ են պետք, նամանավանդ Հայաստանին, որի աշխարհագրական դիրքը եւ որոշ հարեւանների առկայությունը, մեղմ ասած, շատ խնդրահարույց է:

«Դոսյե» կենտրոնը, որը ստեղծվեց «ճիշտ ժամանակին», «ճիշտ տեղում» եւ իհարկե ոչ առանց հատուկ ծառայությունների օգնության (ընթերցողը գլխի կընկնի, որ հետախուզությունների մասին է խոսքը) լավ տեղեկացված է, ունի տվյալների լավ բանկ, լավ վերլուծություն եւ «ճիշտ ժամանակին» Հայաստանի ներքաղաքական դաշտը նոր ցնցումների է ենթարկում:

Ցուցակներ, անուններ, անձնագրերի պատճեններ, կեղծանուններ, «Սվետլանա Մախիմովնա», «Թեկնածու», հետախուզության գեներալ (պաշտոնաթող) Վլադիմիր Չեռնով, գլխավոր հետախուզական վարչության սպա Վալերի Չեռնիշով, եւ այլն, եւ այլն:

Ներեցեք, իսկ ով չգիտի, որ Հայաստանի տարածքում են օտարերկրյա հետախուզության ռեզիդենտուրաները (կայանները), ինչպես լեգալ, այնպես էլ ոչ լեգալ:

2019թ. հուլիսի վերջին (տե՛ս «Ազգ» 30, «Լրտեսական պատերազմները խորանում են»), Թեհրանում (Իրան) կայացած ասուլիսի ժամանակ Տեղեկատվության նախարարության (ԻԻՀ Հատուկ ծառայություն) բարձրաստիճան սպան հայտարարեց, որ երկրի անվտանգության ուժերը բացահայտել են լրտեսական ցանց 17 հոգուց (Իրանի քաղաքացիներ), որոնք աշխատում էին Իրանի կարեւորագույն տնտեսական եւ տեղեկատվական ոլորտներում: Ցանցը հավաքագրել եւ ղեկավարվում էր ԱՄՆ Կենտրոնական Հետախուզական Վարչության կողմից: Փաստվում է, որ իրանցիներից ոմանք հավաքագրվել են ամերիկացիների կողմից Երեւանում, «Կասկադի» շրջակայքում գտնվող ռեստորաններում: Ավելին, իրանական հակահետախուզությունը բավականին երկար ժամանակ աշխատել է այդ նույն տարածքում եւ բացահայտել ու գաղտնազերծել է իրենց դեմ աշխատող լրտեսական ցանցը:

Ամփոփում եմ, Երեւանում հավաքագրվել են, Երեւանում՝ գաղտնազերծվել, աշխատել են այդ հատուկ ծառայությունները իրար դեմ եւ ոչ մեկ or, կամ մեկ շաբաթ: Եվ ի՞նչ, ոչ ոք շոկի չենթարկվեց, ցնցումներ չեղան, չցնցվեցին նույնիսկ Հայաստանի հատուկ ծառայության դռներն ու պատուհանները: Իսկ ամենահետաքրքրականն այն էր, որ դեռ պարզություն չմտցված, թե ո՞վ ո՛ւմ բարեկամն է, Ադրբեջանի հետախուզության գործակալ, հայտնի լրագրողուհի **Նուրանի Խանումը** (Թոֆիգախանում Կասիմովան) արդեն հանդես է գալիս իր երկրում խորը վերլուծություններով եւ եզրակացություններով: Այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ կարծես, թե հակամարտող երկու կողմերն էլ նրան «մուտք» են տվել ամբողջ հետախուզական եւ հակահետախուզական գործառույթներին եւ ավելին, պարզվեց, որ Հայաստանը իր մեղքի բաժինն ունի այդ ամեն ինչում:

Ասելս ի՞նչ է. ո՞վ չգիտի, որ Հայաստանում, ինչպես եւ ամբողջ աշխարհում, դեսպանատների, տարբեր այլ կազմակերպությունների «ծածկի» տակ աշխատում են լեգալ եւ ոչ լեգալ հետախույզներ, նրանք հավաքում են տեղեկատվություն ամեն ինչի եւ ամեն մեկի վերաբերյալ, որը հետաքրքրական է իրենց կառավարությունների համար: Ժամանակ առ ժամանակ հետախուզությունները, ելնելով օպերատիվ-քաղաքական իրավիճակներից, անցկացնում են «ակտիվ միջոցառումներ», որոնք առաջ են բերում «քիրախ» երկրում ներքաղաքական ցնցումներ, սենսացիոն պայթյուններ, հետաքննություններ, մեկնաբանություններ, համացանցի ակտիվացում, տեղից վեր կացողը ներսում թե դրսում սկսում է փիլիսոփայական վերլուծություններ անել, գնահատականներ տալ:

Իմիջայլոց, դետեկտիվ ժանրի սիրահարներին ծանոթացնեմ մի քանի մոտեցումների: Անգլիայի հատուկ ծառայությունները իդեալական լրտես են համարում երիտասարդ, սովորական ձիրքով, լավ ծագումով եւ կրթությամբ, բավականաչափ անձնական ունեցվածքով, ուշագրավ արտաքինով, խելամիտ համարձակությամբ, համառության հատկանիշներով աչքի ընկնող, փիլիսոփայական հակումներով մարդկանց: Անգլիական չափանիշներով լրտեսը եթե նույնիսկ կրում է ցինիզմի եւ ոճնամոլի դիմակ, իրականում նա նրբազգաց է, զուսպ, հետաքրքրասեր եւ խորագիտակ անձ է:

Ռուսները՝ թեկնածուի մեջ փնտրում են պրագմատիկ (գործնական բնույթի) եւ դոգմատիկ (առարկություն չընդունող) հատկանիշներ: Այդ թեկնածուն պետք է լինի հնարավորինս մտավորական, կյանքը սիրող, գրքասեր, աշխատասեր, անդրդվելի զուսպ եւ ռեֆլեքսներով լի: Այլ խոսքով ասած՝ ռուսական գործակալը պետք է լինի յուղով լավ օծված ինքնաձիգ, պատրաստ ամեն վայրկյան կրակել եւ գործել այնպես, ինչպես գրված է «դասագրքում»:

Իսկ հիմա ամերիկյան մոտեցումը: Լրտեսը պետք է լինի բարեհոգի: Բայց եւ կոմիտաս ինդիվիդուալիստ, պարտադիր չէ, որ նա փայլուն գիտելիքներ ունենա բոլոր ոլորտներում, բայց իր մասնագիտության մեջ պետք է լինի գրեթե կախարդ, ունենա հայտնագործելու մեծ ունակություններ, արկածախնդրություն, ինտուիցիա (ներըմբռնողություն), տարբեր իրավիճակներից «մաքուր» դուրս գալու ընդունակություն եւ մի ֆիչ էլ «խենթ ու թոկից փախած» հատկանիշներ:

Իհարկե, այս դասակարգումները ժամանակի հետ փոխվում են, մանավանդ գլոբալիզացիայի դարաշրջանում, բայց լավ լրտեսները վերը նշված հատկանիշների մեծ մասը պետք է ունենան եւ այդ անձինք պետք է իրական հավաս ունենան այն ամենի հանդեպ, ինչ անում են:

Ամփոփելով մտքերս՝ առաջարկում եմ մեր հասարակությանը չենթարկվել հիստերիկ բռնկումների, «լրտեսոմանիայի». դա շատ վտանգավոր է, երբ հարեւանը հարեւանի վրա մատնություն է գրում:

Իհարկե կարդացեք, դիտեք, վերլուծեք Ձեր համար, բայց աշխատեք մոտենալ այս ամենին որքան լավ նկարահանված գեղարվեստական ֆիլմի կամ սուր դետեկտիվ վեպի:

Իսկ մասնագետները, որոնք կոչված են աշխատել այս ոլորտում, թող գտնեն խոցելի կետերը, փակեն դռնք եւ առնազն հավասարակշռություն ստեղծեն համապատասխան ոլորտում:

Մի՛ դատեք, որ Աստուց չդատվեք, որովհետեւ ինչ դատաստանով որ դատեք, նրանով եք դատվելու, եւ ինչ չափով, որ չափում եք, նրանով պիտի չափվի Ձեզ համար:

(Մատթեւոսի Ավետարան 7.1-5)

ՎԵՐՋ

Ռուս լրագրող Յուրի Կատյոնոկը ծանր վիրավորվել է Արցախում

Երեկ թշնամին ռմբակոծեց Շուշիի Ղազանչեցոց եկեղեցին, ընդ որում՝ երկու անգամ: Մշակութային այս վանդալիզմը ոչ միայն ավերել է Ղազանչեցոցը, այլեւ մոտակայքում աշխատող լրագրողների կյանքին է սպառնացել: Եկեղեցուն երկրորդ անգամ հարվածելու հետեւանքով վիրավորվել է մասնագիտական պարտքը կատարող երեք լրագրող: Արցախի նախագահի խոսնակ **Վահրամ Պողոսյանը** լրատվամիջոցներին տեղեկացրել է, որ նրանցից մեկը «Сегодня.ру»-ի խմբագիր **Յուրի Կատյոնոկն** է: Նա թոռերի շրջանում լուրջ վնասվածքներ է ստացել եւ ենթարկվել վիրահատության: Մյուս երկու լրագրողները, որոնցից մեկը հայ է, ավելի թեթեւ վնասվածքներ ունեն:

Կանխատեսելի՞ է վերջնամարտը արցախյան պատերազմում

⇨4

Ղեկավարությունը համոզիչ հարցազրույցներ տվեց աշխարհի գլխավոր պարբերականներին, իսկ ռազմական գերատեսչությունը կանոնավոր, շարունակ թարմացվող տեղեկություններով հանդես եկավ հեռուստատեսությամբ եւ սոցցանցերում: Նրանք նաեւ ընդգծեցին, որ լրագրողները ազատ կարող են Հայաստան եւ Արցախ մուտք գործել, ի հակադրություն Ադրբեջանի, որ արգելել էր նրանց մուտքը:

Օգտվելով ցեղասպանությունը հերքելու էրդողանի նախաձեռնությունից, Հայաստանի կառավարության ներկայացուցիչները նաեւ կարողացան Հայոց ցեղասպանության հարցը կաղապատել, նշելով, որ Թուրքիան եկել էր տարածաշրջան ավարտելու համար այն, ինչ սկսել էր 1915-ին: Փաշինյանը կոչ արեց ԱՄՆ Ազգային անվտանգության խորհրդատու Ռոբերտ Օ'Բրայենին ճնշարկելու ամերիկյան F-16 կործանիչների հարցը, որ Թուրքիան օգտագործում է հաղաքացիական բնակչության դեմ: Նա այդ նույն հարցը բարձրացրեց նաեւ New York Times-ին տված իր հարցազրույցի ընթացքում:

Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանն էլ իր հերթին հայ հաղաքացիների դեմ Ադրբեջանի օգտագործած իսրայելական կասետային ռումբերի հարցը ճնշարկեց Իսրայելի նախագահ Ռ. Ռիվլինի հետ: Որոշ բողոքի նշան Երեւանը Իսրայելից ետ կանչեց իր դեսպանին: Իսկ Կանադայի արտգործնախարար Ֆրանսուա Ֆիլիպ Շամպայնը հայտարարեց, որ իր երկիրը դադարեցնում է զինամթերքի մատակարարումը Թուրքիային:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ջենս Ստոլտենբերգը խորհուրդ տվեց Թուրքիային օգտագործել իր դիրքը եւ կողմերին հրավիրել բանակցությունների: Թուրքիայի նախկինում ձեռնարկած տիեզ արկածախնդրությունների ժամանակ նա անվերապահ աջակցությունն էր արտահայտել Թուրքիային:

Երբ ԵԱՀԿ-ն կոչ արեց դադարեցնել թշնամական գործողությունները, առաջին հերթին նա էրդողանին դիմեց, ոչ՝ Ալիեւին: Սա նշանակում է, որ Թուրքիան է ղեկավարում պատերազմը, իսկ Ադրբեջանը իր նախկին տեսքի ուրվականն է դարձել:

Այս պատերազմը Արայիկ Հարությունյանին համաշխարհային թատերաբեմ բարձրացրեց: Փաշինյանն իմն էլ նպաստեց Ղարաբաղի վարկի բարձրացմանը, նպատակ ունենալով հրադադարի կամ խաղաղության պայմանագրի ստորագրման ժամանակ տեսնել Ղարաբաղի կառավարության ստորագրությունը, մի հանգամանք, որ Ադրբեջանին կսիրեր Ճանաչել այդ հանրապետությունը որպես իմքնիշխան պետություն: Բայց նախկան դրան հասնելը Հայաստանը պետք է ճանապարհ հարթի, ինքը ճանաչելով Ղարաբաղի անկախությունը: Կարծում ենք արդեն ժամանակն է:

Էրդողանն ու Ալիեւը փոխել են իրենց տոնը: Այժմ իրե՛նք են ցանկանում խաղաղություն կնքել: Ղարաբաղի բանակը հաղթում է: Ամենայն հավանականությամբ Ղարաբաղն է լինելու քելադրողը:

Անգլ. թարգմ. ՀԱԿՈԲ ՕՇԱԿԱՆԸ
(The Arm. Mirror-Spectator, 08.10.20)

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակության ԻԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԹԵՔԵՅԱՆ ՓԱԲԼԻՇԻՆԳ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
e-mail: azg@azg.am, azgdaily@gmail.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Հաշվապահություն (գովազդ) հեռ. 582960
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարվածքը՝ «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 0010

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՄԱՆԱՏ՝ 37-48-29-60, 060

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Թեքեյան Փաբլիշինգ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Ստորագրուած է տպագրութեան 8.10.2020, գինը՝ 200 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: